

ԱԶԱՏՅԱՆ ՇԱՎԱՐՇ ԽԱՉԻԿԻ

Ծննդյան տվյալներ՝ 25.03.1990թ.

Ծննդավայր՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին, Դավթաշեն

Շավարշ Խաչիկի Ազատյանը նախնական կրթություն ստացել է Արագածոտնի մարզի Դավթաշեն գյուղի Աթաբեկ Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում:

2007-2011 թթ. սովորել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի պատմության բաժնի բակալավրիատում:

2011-2013 թթ. ծառայել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակում:

2013-2015թթ. ուսումը շարունակել է ԵՊՀ Պատմություն ֆակուլտետի մագիստրատուրայում՝ Հարակից երկրների պատմության ամբիոնում:

2016թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա:

2021 թ. պաշտպանել է ավարտական աշխատանք՝ «V-VIII դդ.. հայ սրբախոսական գրականության պատմագիտական արժեքը» խորագրով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի կոչում:

2019 թ. աշխատանքի է անցել ԳԱԱ ՊԻ միջին դարերի պատմության բաժնում՝ զբաղեցնելով նախ ավագ լաբորանտի, ապա գիտաշխատողի պաշտոն:

2014թ. զբաղվում է նաև ուսուցչական գործունեությամբ՝ «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» դասավանդելով «Շահամիր Շահամիրյան» կրթահամալիրում և «Գազպրոմ Արմենիա» ուսումնա-սպորտային համալիրում: 2025 թ. Վրաստանի պատմության պատմագրություն և

աղբյուրագիտություն է դասավանդել ԵՊՀ պատմության ֆակուլտետի Վրացագիտության մագիստրոսական ծրագրի շրջանակներում։

Շավարշ Ազատյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում են վաղմիջնադարյան Հայաստանի և Վրաստանի սրբախոսական գրականությանը, ինչպես նաև Հայոց պատմության աղբյուրագիտության, պատմագրության և առօրեականության հարցերին։ Այս թեմաների շրջանակներում նա հրատարակել է 12 հոդված հայաստանյան և արտասահմանյան գիտական հանդեսներում, որոնցից մեկը ընդգրկված է **Scopus/WebofScience (Q2)** ՄԳՇ-ում։

Շ. Ազատյանը սկսած 2017թ. մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների։

Ամուսնացած է և ունի մեկ դուստր։